

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ**

**Վահրամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

տ.գ.դ., պրոֆեսոր

**Արփինե ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀԱՊՀ հայցորդ

Բանալի բառեր. բնակչություն, մարզ, կյանքի որակ, ռազմավարություն, սուբյեկտիվ հայեցակարգ, օբյեկտիվ հայեցակարգ

**Ներածություն:** Հետազոտողների մի մեծ խումբ կարծում է, որ քանի որ պետական մարմինների գոյության վերջնական նպատակը բնակչության կյանքի որակի բարելավումն է, ապա հենց այս չափանիշը պետք է հիմք հանդիսանա մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական պլանավորման գործընթացի համար: Այս միջոցի առավելությունն այն է, որ այն էականորեն կախված չէ սուբյեկտիվ գնահատականներից, անձնական փոխհարաբերություններից և սոցիալական վարքագծից, ինչը թույլ է տալիս չափել առաջընթացը՝ չհիմնվելով սպառողների անձնական գնահատականների վրա: Կենսամակարդակի բարձրացումը, որպես ռազմավարական ծրագրի գլխավոր նպատակ ընդունելը, թույլ կտա գործադիր իշխանություններին կազմակերպել կառավարման համակարգը՝ այն կողմնորոշելով ոչ թե դեպի որոշակի ցուցանիշների ձեռք բերում, այլ դեպի դրված նպատակների իրականացում: Կյանքի որակի բարելավմանն ուղղված ուշադրությունը միանգամայն արդարացված է, քանի որ պետական հաստատությունների հետազոտողների շրջանում հազվադեպ կարելի է հանդիպել պետական մարմինների գործունեության մեկ այլ գերակա նպատակի գոյության մասին կարծիք: Հայեցակարգի հիմնական խնդիրն այն է, որ կյանքի որակը բազմագործոն և դժվար չափելի չափանիշ է: Հետազոտողների կարծիքները տարբերակվում են կյանքի որակի բուն հայեցակարգի և դրա բաղադրիչների, ինչպես նաև չափման հնարավորությունների սահմանման հետ կապված: Միևնույն ժամանակ, այս ցուցանիշը ակնհայտորեն հարմար է նրանով, որ թույլ է տալիս մշտապես վերահսկել հիմնական նպատակին հասնելու ուղին, ինչպես նաև կապել մարտավարական ծրագրերը ռազմավարական ոլորտների գործունեությանը:

**Գրականության ակնարկ:** Կյանքի որակի վերաբերյալ ծավալուն հետազոտություններ են իրականացվել 20-րդ դարի 60-ականների կեսերից: Սա-

կայն, «կյանքի որակ» հասկացության բովանդակության և կառուցվածքի հարցը առ այսօր մնում է վիճահարույց: Ոմանք դա կապում են կենսաձևի, կենսականակրդակի կամ կենսաոճի հետ, այլոց կարծիքով այն կախված է առավել օբյեկտիվ գործոններից, ինչպիսիք են շրջակա միջավայրի որակը, սթրեսային իրավիճակների քանակը և այլն: Օրինակ ըստ Լ. Օսբերգի և Է. Շարպի կյանքի որակը պետք է նույնականացնել տնտեսական բարեկեցության հետ [IEWB. Date of access: December 18, 2015.], ըստ Ջ. Մակլերայթի բարեկեցությունը պետք է գնահատել հիմնվելով ուսումնասիրվող երկրում ապրող մինչև 6 տարեկան երեխաների անտրոպոմետրիկ ցուցանիշների՝ հասակի և տարիքի հարաբերակցության ու քաշի և հասակի հարաբերակցության տվյալների վրա [Micklewright John "What can child anthropometry reveal about living standards and public policy? An illustration from Central Asia".], Ջ. Կատոնի քաղաքացիների բարեկեցության մակարդակը պետք է հիմնվի նրանց սուբյեկտիվ դատողությունների վրա՝ կապված սեփական ֆինանսական վիճակի և ամբողջ երկրի ֆինանսական դրության փոփոխությունների հետ [The Free Encyclopedia. Date of access: December 18, 2019]: Նման բազմակարծությունը պայմանավորված է, նախ, որոշակի անհատի կյանքի որակի գաղափարի երկիմաստությամբ, և երկրորդ, սոցիալական խմբի կյանքի որակի հայեցակարգի մեծ անորոշությամբ: Կան բազմաթիվ տեսություններ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել անհատի կյանքի որակը՝ ընդգծելով անհատի կյանքի տարբեր ասպեկտներ,բայց միևնույն ժամանակ, չկա հաստատված կարծիք այն մասին, թե ինչ տեսանկյունից պետք է դիտարկել կյանքի որակը:

**Մեթոդաբանություն:** Սույն հետազոտության նպատակն է կյանքի որակի գնահատման տարբեր մոտեցումների ուսումնասիրությունն ու լավագույնի ընտրությունը՝ մարզի ռազմավարական պլանավորման համար գերակա նպատակի սահմանման տեսանկյունից: Դրված նպատակին հասնելու համար կիրառվել է համեմատական գնահատման մեթոդաբանությունը, հաշվի առնելով նաև մարզում գերակա ոլորտների որոշման տեսանկյունից կիրառելիության հնարավորությունը:

**Վերլուծություն:** Կախված անձից, ում դիրքից պետք է գնահատել կյանքի որակը, առանձնացվում է երեք հիմնական մոտեցում.

- օբյեկտիվ հայեցակարգեր՝ կենտրոնացած օբյեկտիվ ցուցանիշների վրա, որոնք կախված չեն կենսապայմանների վերաբերյալ որևէ մեկի կարծիքից,
- սուբյեկտիվ հայեցակարգեր, որոնք ուսումնասիրում են մարդկանց պատկերացումները կենսապայմանների վերաբերյալ,
- հայեցակարգեր, որոնք համատեղում են կյանքի որակի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

Կյանքի որակը օբյեկտիվորեն գնահատելու մեթոդներում առավել հաճախ օգտագործվող ցուցանիշներն են համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով: Այս ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատել սպառման մակարդակը կամ սպառողական ապրանքների քանակը, որոնք հասանելի են բնակչության: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀՆԱ-ն չափելիս հաշվի չեն առնվում այնպիսի սոցիալ-տնտեսական ասպեկտներ, ինչպիսիք են կրթության մակարդակը, շրջակա միջավայրի վիճակը, ազգի առողջության ցուցանիշները, սոցիալական ոլորտի վիճակը, հանցավորության մակարդակը և շատ ուրիշ գործոններ: Ավելին, ՀՆԱ-ի աճը ուղղակիորեն չի նշանակում երկրի զարգացման սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարելավում, ավելին, ընդհակառակը, կա ՀՆԱ-ի աճով պայմանավորված դրանց միաժամանակյա վատթարացման հավանականություն: ՀՆԱ-ն հաշվի չի առնում ոչ շուկայական ինստիտուտների կողմից իրականացվող գործարքները և ստվերային շուկայում գործողությունները, ոչ բնակչության շրջանում եկամտի բաշխման համակարգը և ազգային ծախսերի կառուցվածքը: Այս ցուցանիշը բնութագրում է տվյալ ժամանակահատվածը է և չի արտացոլում երկրի զարգացման հեռանկարները: Նշված ցուցանիշի որոշ թերություններ շտկելու փորձեր են ձեռնարկվել Գ. Բեկերիի, Տ. Ֆիլիպսի և Ռ. Սուարեզի կողմից [Becker G.S., Philipson Tomas J., Soares Rodrigo R. The quantity and quality of life and the evolution of world inequality]: Այս հետազոտողները պնդում էին, որ ՀՆԱ-ն կարելի է ավելի արդյունավետ դարձնել, եթե հաշվարկեք ոչ միայն անձի եկամտի մակարդակը, այլ նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում նա ստացել է այդպիսի եկամուտ: ՀՆԱ-ի հայտնի այլընտրանք է իրական զարգացման ինդեքսը (Genuine Progress Index, GPI), որը մշակվել է Քոբբի կողմից 1995 թվականին [Asheim Geir B. Green national accounting: Why and how? p. 34]: GPI-ն, ինչպես ՀՆԱ-ն, տնտեսական բարե-

կեցության չափանիշ է, բայց այն նաև հաշվի է առնում ավելի քան քսան ասպեկտներ, որոնք անտեսվում են ՀՆԱ-ի հաշվարկման ժամանակ, և ընդլայնում այս ցուցանիշը՝ հաշվի առնելով սոցիալական ոլորտն ու շրջակա միջավայրի գործոնները: Բոլոր տնտեսական գործարքների համար GPI-ը հաշվարկելիս որոշվում է կյանքի որակի վրա ազդեցության (դրական կամ բացասական) բնույթը: GPI-ի թերությունն այն է, որ դրա օգնությամբ ստացված գրնահատականները միշտ չէ, որ ճիշտ են, քանի որ այն, ինչպես ՀՆԱ-ն, հիմնված է տնտեսական տեսության վրա: Տնտեսական բարեկեցության ինդեքսը (Index of Economic Well-Being, IEWB), որ մշակվել է Լ. Օսբերգի և Է. Շարպի կողմից XX դարի 90-ականների սկզբին [Index of Economic Well-Being, IEWB. Date of access: December 18, 2015.], համարվում է ամենաարդիական և մշակված ցուցանիշներից մեկն է: Այս ինդեքսը կառուցվում է որպես անբաժանելի ցուցանիշ, որը հիմնված է չորս հիմնական գործոնների և դրանց համար փորձագիտականորեն որոշված կշիռների վրա: Ինդեքսը հաշվարկելու համար ընդունվում են հետևյալ ցուցանիշները՝ մեկ շնչի հաշվով սպառման մակարդակը 0.4 կշիռով, արտադրության ընդհանուր պաշարներ՝ 0,1 կշիռով, 0.25-ական գործակիցներով ապագա եկամտի անհավասարության բաղադրիչը և հուսալիության աստիճանը: Այս ցուցանիշի առավելությունը լավ զարգացած տեսական հիմքն է և կյանքի ոչ շուկայական ոլորտների ցուցանիշների՝ էկոլոգիայի, առողջապահության, սոցիալական ոլորտի և այլնի ներառումը հաշվարկներում: Հիմնական թերությունը մշակողների կողմից ցուցանիշների «սուբյեկտիվ» կշիռների որոշումն է: «Կանաչ» զուտ ազգային արտադրանքը (Green Net National Product GNNP) այն տեսական ցուցանիշներից է, որը թույլ է տալիս գնահատել ոչ միայն կյանքի որակի ներկա մակարդակում, այլ նաև այն ապագայում պահպանելու ունակությունը [Asheim Geir B. Green national accounting: Why and how? p. 46]: GNNP- ն իր մեջ ներառում է տեղեկություններ բնական ռեսուրսների վիճակի, կապիտալի մաշվածության և մարդկային կապիտալի աճի մասին: Այս ցուցանիշը ստեղծվել է որպես կյանքի կայուն որակի ցուցանիշ, բայց իրականում այն ավելի շուտ բնութագրում է մարզի հարստությունը: GNNP- ն ավելի կայուն է, քան ՀՆԱ-ն, երկրների կայուն կյանքի որակի համեմատության համար: Այն կարող է օգտագործվել գնահատելու մարզում իրական ներդրումների փոփոխությունը: Կյանքի ֆիզիկական որակի ինդեքսը (Physical Quality of Life Index, PQLI), որ մշակվել է Մորիսի գլխավորությամբ մի խումբ գիտնականների կողմից, ամենահայտնի

և հաճախակի օգտագործվողն ցուցանիշներից մեկն է (հաճախ՝ ՀՆԱ-ի, գնողունակության, պաշտոնական փոխարժեքի և այլ սոցիալական ցուցանիշների հետ համատեղ): PQLI-ը գրագիտության, երեխաների մահացության և կյանքի տևողության ցուցանիշների կշռված միջինն է, որը բնութագրում է բնակչության ֆիզիկական առողջության մակարդակը և մարդու հիմնական կարիքների բավարարվածության աստիճանը [Brainy Encyclopedia Date of access: December 18, 2019]: PQLI-ի թերություններից է այն, որ այս ցուցանիշը ներառում են վիճակագրական ցուցանիշների մեծ կորելյացիա: Միևնույն ժամանակ, հաշվարկման պարզությունը, միջպետական համեմատելիության հրնարավորությունը ցուցանիշը գրավիչ են դարձնում օգտագործման համար: Մարդկային զարգացման ինդեքսը (Human Development Index, HDI) մշակվել է Ա. Սենի կողմից [National Statistical Coordination Board. Date of access: December 18, 2018], որպես ՀՆԱ-ին փոխարինող ցուցանիշ, որն առավել համակողմանի է գնահատում բնակչության կյանքի որակը: Այն թույլ է տալիս գնահատել բնակչության հնարավորությունների մակարդակը և բաղկացած է երեք ցուցիչից՝ կյանքի տևողության ինդեքս, կրթության ինդեքս և եկամտի ինդեքս, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1/3 կշռով: Ընդ որում, կրթության ինդեքսը նույնպես ածանցյալ ցուցանիշ է բաղկացած երկու մասից՝ գրագիտության մակարդակ 2/9, և կրթությանն ընդգրկվածություն 1/9 կշիռներով: Քննադատները վիճարկում են ցուցանիշի մեջ կյանքի տևողության ներառումը, կշիռների բաշխումը և ՀՆԱ-ի օգտագործումը՝ նշելով, որ վերջինս եկամտի ճշգրիտ չափիչ չէ: Այնուամենայնիվ, այս ինդեքսը հարմար է ընկալման և օգտագործման համար, առավել արդյունավետորեն կարող է օգտագործվել պետական քաղաքականության գերակա ուղղությունները որոշելիս և միջժամանակային համեմատություններ կատարելիս:

Կյանքի որակի սուբյեկտիվ գնահատումն իրականացվում է բնակչության շրջանում կատարված հարցումների հիման վրա: Հասարակական կարծիքի հարցումը հնարավորություն է տալիս կատարել կյանքի որակի բազմակողմանի գնահատում՝ չօգտագործելով առանձին գործոնների նշանակալիությունը: Ըստ Social Weather Station գործակալության կյանքի որակը գնահատելու մեթոդաբանության տեխնիկայի, կյանքի որակը կախված է նրանից, թե ինչպես է մարդը պատասխանում երկու կառուցվածքային նման հարցերի.

1. Եթե համեմատեք ձեր կյանքի որակը նեկա պահին և 12 ամիս առաջ, կասեք, որ այն ավելի լավ է դարձել, մնացել է նույնը, ավելի վատ է դարձել: Արդյունքում, անձը համարվում է կամ «շահող» (gainer) կամ «պարտվող» (loser) :

2. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կլինի կյանքի որակը հաջորդ 12 ամիսների ընթացքում՝ ավելի լավ, ավելի վատ, նույնը կլինի: Օգտագործելով այս հարցը, հարցվողները դասակարգվում են որպես հոռետես կամ լավատես:

Ընդհանրապես, այս սուբյեկտիվ մոտեցումը նախընտրում են հասարակական գիտությունների մասնագետները, քանի որ դրա արդյունքները հեշտ է ձեռք բերել, հրապարակել և մեկնաբանել: Կյանքի որակը գնահատելու համար վերը նշված մեթոդը հիմնված է բացառապես անձի բարեկեցության վերաբերյալ նրա սուբյեկտիվ դատողության վրա, բայց սուբյեկտիվ տեսությունների ոչ բոլոր կողմնակիցներն են մերժում սոցիալ-տնտեսական զարգացման վիճակագրական ցուցանիշների վերլուծության նպատակահարմարությունը:

Ֆերանսը և Պաուերսը առաջարկել են գնահատել կյանքի որակը՝ մարդու կյանքի հիմնական ոլորտների հետազոտության միջոցով, որի ընթացքում հարցվողները պետք է գնահատեն այդ ոլորտները՝ ըստ յուրաքանչյուրի վիճակից բավարարվածության աստիճանի և իրենց համար նշանակալիության: Հետագայում այս մեթոդն օգտագործեցին շատ հետազոտողներ, ինչպիսիք են Գ. Ռիզենը և Ուլվասը [Glen Riecen, Ugur Yavas Improving quality of life in a region: A survey of area residents and public sector implications. p. 556]: Վերջիններս կազմեցին 60 ցուցանիշների ցուցակ 9 սոցիալ-տնտեսական ոլորտներում՝ տնտեսություն, կրթություն, ենթակառուցվածքներ, առողջություն, հանցավորություն, կյանքի պայմաններ, ժամանց, տրանսպորտ, արվեստ և մշակույթ: Հարցվածներին նախ խնդրում են գնահատել ցուցիչների նման ցուցակը՝ ըստ նշանակության և բավարարվածության, ապա ստեղծում են կյանքի որակի ինդեքս՝ օգտագործելով բացահայտված նշանակալիության կշիռները: Ուսումնասիրվող ինդեքսի թերությունը կայանում է նրանում, որ այն առաջարկում է գնահատել այնպիսի ոլորտներ, որոնք նախապես ճանաչվել են նշանակալի, քանի որ հենց դրանք են ընտրվել հետազոտության համար: Այս ցուցանիշի հաշվարկումից հետևում է, որ որոշակի ոլորտի վիճակից բավարարվածության բարձր մակարդակի և դրա կարևորության ցածր աստիճանի արտադրյալը, համարժեք է այլ ոլորտի բավարարվածության ցածր

մակարդակի և կարևորության բարձր աստիճանի արտադրյալին: Բացի այդ, այս ցուցանիշը սխալ է, քանի որ մարդը ի վիճակի չէ համարժեք գնահատել ոլորտները առանձին (նա կյանքի որակը ընկալում է որպես ամբողջական հայեցակարգ):

Բնակչության առողջական վիճակի գնահատման ինդեքսը ((Health-Related Quality of Life (HRQOL)) մշակվել է հիվանդությունների վերահսկման, առողջության պահպանման և ծերացման կենտրոնի (Center for Disease Control, Health Care and Aging Branch) կողմից [National Center for Chronic Disease Prevention and Health Promotion Date of access: December 18, 2005.]: Այն գնահատում է բնակչության առողջական վիճակը՝ հիմնվելով հարցումների ընթացքում ստացված սուբյեկտիվ տվյալների վրա: Ցուցանիշը հաշվարկում է վերջին ամսվա ընթացքում հարցվածի ֆիզիկական կամ հոգեկան առողջության անբավարար վիճակի օրերի գումարը և տալիս է «առողջ» օրերի միջին քանակը: Այնուամենայնիվ բազմաթիվ հետազոտողներ կարծում են, որ միայն սուբյեկտիվ և օբյեկտիվ մեթոդների համակցումը կարող է տալ բնակչության կյանքի որակի ճշգրիտ գնահատում: Դ.Մայերսը նույնպես իր ուսումնասիրություններում հակված է օգտագործել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ ցուցանիշներ [Myers Dowell "Community-relevant Measurement of Quality of Life. A Focus on Local Trends". p.118]: Ըստ Մայերսի կյանքի որակը պետք է որոշվի՝ հաշվի առնելով տեղի բնակչության նախկին փորձը: Բընակավայր ընտրելիս անհատները ուշադրություն են դարձնում տարբեր գործոնների (օրինակ՝ տարածաշրջանում բնակլիմայական պայմաններին): Հետևաբար, տարբեր մարզերի բնակիչները տարբերվում են բնակության վայրի ընտրության որոշակի հատուկ նախասիրություններով, ինչը նշանակում է, որ կյանքի որակի ընկալման վրա ազդող գործոնները նույնպես պետք է տարբեր լինեն: Ըստ Մայերսի, բնակչության անցյալի փորձը հաշվի առնելու համար բարեկեցության օբյեկտիվ ցուցանիշների վերլուծությունը պետք է իրականացվի ոչ թե դրանց ընթացիկ արժեքների, այլ հարաբերական փոփոխությունների հիման վրա: Մայերսը առանձնացնում է 12 հիմնական գործոն, որոնք ազդում են բարեկեցության վրա՝ կրթություն, առողջապահություն, զրբաղվածություն, եկամուտ, տրանսպորտ, հանցավորություն, անհավասարություն, բնակարանային պայմաններ, ջրի որակ, ժամանց, հանգիստ, ռեսուրսաններ/խանութներ: Հետազոտության արդյունքների հիման վրա Մայերսը

եզրակացրեց, որ ցուցանիշների դինամիկայի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները տալիս են համանման արդյունքներ, մինչդեռ մարդիկ մեծապես կարևորում են այն գործոնները, որոնց վիճակը տարածաշրջանում վատթարանում է:

Կենսապայմանների միջազգային ինդեքսը հաշվարկվում է տարեկան կտրվածքով 1984 թվականից ի վեր: Այս ցուցանիշի հիման վրա երկրների վարկանիշային աղյուսակը հրապարակվում է International Living պարբերականում: Ցուցանիշն ինքնին կյանքի որակի հետևյալ չափումների կշռված գումար է (կշիռները նշված են փակագծերում)՝ տնտեսություն (20%), առողջապահություն (12%), մշակույթ և հանգիստ (12%), ենթակառուցվածքներ (12%), կյանքի արժեք (20%), ազատություն (12%), անվտանգություն և ռիսկ (12%):

Յուրաքանչյուր երկրում կյանքի որակի չափանիշները հաշվարկելիս օգտագործվում են մեծ թվով ցուցանիշներ, որոնց ցանկը հաստատուն չէ, և կարող է փոփոխվել: Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ վարկանիշավորման կարգն ինքնին սուբյեկտիվ է, այն հիմնված է պետական վիճակագրական գրասենյակների կողմից հավաքված տվյալների վրա:

Կյանքի որակի համեմատական սանդղակը մշակել է Ռ. Քումինսը: Այն ներառում է կյանքի յոթ ոլորտներ՝ առողջություն, արտադրողականություն, գիտելիք, անվտանգություն, նյութական, սոցիալական և հուզական բարեկեցություն: Յուրաքանչյուր կատեգորիա նկարագրվում է երեք գործոններով (մեկ օբյեկտիվ և երկու սուբյեկտիվ), որոնք միասին տալիս են համապատասխան կատեգորիայի ընդհանուր արժեքը: Օբյեկտիվ ցուցանիշը յոթ կատեգորիաների արժեքների հանրագումարն է: Սուբյեկտիվ ցուցանիշները կյանքի որակի համապատասխան կատեգորիայի բավարարման մակարդակն է (0-ից 7) և համապատասխան կատեգորիայի նշանակալիության մակարդակը (0-ից 5): Վեենհովենի կյանքի ակնկալվող երջանկության ցուցանիշը (HLE) հիմնված չէ առանձին տեսության վրա, բայց ձևավորվում է տեսական փաստարկները և էմպիրիկ ուսումնասիրությունների վրա [Veenhoven, R., 'Happy Life-Expectance: A Comprehensive Measure of Quality-of-life in Nations', Social Indicator Research]: HLE ցուցանիշը հաշվարկվում է կյանքի միջին տևողության և «միջին երջանիկ» տարիների թվի արտադրյալով, ու տատանվում է 0-ից 1 միջակայքում: Կյանքի որակի գնահատման ժամանակակից մոդելների շար-



քին կարելի է դասել կյանքի որակի ինտեգրալային ցուցիչը, որը մշակվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Կենտրոնական տնտեսամաթեմատիկայի ինստիտուտի մասնագետների կողմից՝ պրոֆեսոր Ս.Ա. Այվազյանի ղեկավարությամբ [Айвазян С.А. Эмпирический анализ синтетических категорий качества жизни населения, стр. 21]: Կյանքի որակի ինտեգրալային ցուցիչը փոխկապակցված ցուցանիշների հիերարխիկ համակարգ է, որը թույլ է տալիս գնահատել բնակչության կյանքի որակը չորս ինտեգրալ ցուցանիշների արժեքներով՝ բնակչության որակ, բնակչության բարեկեցության մակարդակ, սոցիալական ոլորտի որակ, բնապահպանական հատվածի որակ: Գնահատման տեղեկատվական բազա է հանդիսանում 100 ապրիոր ցուցանիշների արժեքներ, որոնք հսկվում են վիճակագրական ծառայության կողմից: Ապրիոր ցուցանիշներից ապոստերիորին անցում կատարելու համար օգտագործվում են բազմագիծ (մուլտիկոլինեար) վերլուծությունը, զույգային կորելյացիան, դետերմինացիայի գործակիցները:

**Եզրակացություն:** Այսպիսով կյանքի որակի ինտեգրալային ցուցիչը կարելի է արդյունավետ համարել բնակչության կյանքի որակի միջերկրային և միջմարզային համեմատության համար, քանի որ այն իրականացնում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման նպատակների իրագործման աստիճանի չափում, աղքատներին սոցիալական օգնության հասցեականության օպտիմիզացում, սոցիալական լարվածության, կոռուպցիայի մակարդակի, սոցիալական պաթոլոգիայի, բնակչության գույքի տարբերակման մոնիտորինգ, հասարակության ֆիզիկական առողջության չաում, ինչպես նաև մարզային զարգացման նպատակների համակարգի կառուցում:

### Օգտագործված գրականություն

1. Айвазян С.А. Эмпирический анализ синтетических категорий качества жизни населения // Экономика и математические методы, М.:НАУКА, 2003, том 39, №2, 3.
2. Asheim Geir B. Green national accounting: Why and how? - Department of Economics, University of Oslo, April 1999.
3. Becker G.S., Philipson Tomas J., Soares Rodrigo R. The quantity and quality of life and the evolution of world inequality // NBER Working Paper 9765, June 2003.
4. Glen Riecen, Ugur Yavas Improving quality of life in a region: A survey of area residents and public sector implications // The International Journal of Public Sector Management. Bradford: 2001. Vol. 14, Iss. 6/7; p. 556.
5. Human Development Index (HDI). National Statistical Coordination Board. Date of access: December 18, 2018. <[http://www.nscb.gov.ph/technotes/hdi/hdi\\_tech\\_intro.asp](http://www.nscb.gov.ph/technotes/hdi/hdi_tech_intro.asp)>
6. Health-Related Quality of Life, HRQOL. National Center for Chronic Disease Prevention and Health Promotion Date of access: December 18, 2005. <<http://www.cdc.gov/hrqol/>>
7. Index of Economic Weil-Being, IEWB. Date of access: December 18, 2015. [www.csls.ca/iwb.asp](http://www.csls.ca/iwb.asp)
8. Micklewright John "What can child anthropometry reveal about living standards and public policy? An illustration from Central Asia". Review of Income and Wealth, Series 47, Number 1, March 2001.
9. Myers Dowell "Community-relevant Measurement of Quality of Life. A Focus on Local Trends".
10. The Free Encyclopedia. Date of access: December 18, 2019 [http://en.wikipedia.org/Wiki/index\\_of\\_Consumer\\_Confidence](http://en.wikipedia.org/Wiki/index_of_Consumer_Confidence)
11. The physical quality-of-life index (PQLI). Brainy Encyclopedia Date of access: December 18, 2019. [www.brainyencyclopedia.com/encyclopedia/p/ph/physical\\_quality\\_of\\_life\\_index.html](http://www.brainyencyclopedia.com/encyclopedia/p/ph/physical_quality_of_life_index.html)
12. Veenhoven, R., 'Happy Life-Expectance: A Comprehensive Measure of Quality-of-life in Nations', Social Indicator Research

**Վահրամ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ, Արփինե ԱՍԼԱՆՅԱՆ**  
**Բնակչության կյանքի որակը որպես մարզի զարգացման  
ռազմավարական նպատակ**

*Բանալի բառեր. բնակչություն, մարզ, կյանքի որակ, ռազմավարություն, սուբյեկտիվ հայեցակարգ, օբյեկտիվ հայեցակարգ*

Հոդվածում ուսումնասիրվել են կյանքի որակի որոշման տարբեր մոտեցումներ, դրանք հիմնականում դասակարգելով երեք՝ օբյեկտիվ, սուբյեկտիվ և համակցված խմբերում: Հետազոտության արդյունքում եզրակացվել է, որ մարզերում կյանքի որակի գնահատման լավագույն մեթոդը ինտեգրալային ցուցիչի մեթոդն է, քանի որ վերջինիս օգնությամբ հնարավոր է իրականացնել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների իրագործման աստիճանի չափում, սոցիալական լարվածության, կոռուպցիայի մակարդակի, ասոցիալական պաթոլոգիայի, բնակչության գույքի տարբերակման մոնիտորինգ, հասարակության ֆիզիկական առողջության չափում, ինչպես նաև մարզային զարգացման նպատակների համակարգի կառուցում:

**Ваграм БАГДАСАРЯН, Арпине АСЛАНЯН**

**Качество жизни населения как стратегическая цель развития региона**

*Ключевые слова: население, регион, качество жизни, стратегия, субъективная концепция, объективная концепция*

В статье рассматриваются различные подходы к определению качества жизни, в основном классифицируя их на три группы: объективные, субъективные, комбинированные. Рассматривались методологии строительства, перспективы и недостатки разных индексов. В результате исследования был сделан вывод, что лучшим методом оценки качества жизни в регионах является метод интегрального индекса, так как его можно использовать для измерения уровня достижения целей социально-экономического развития, мониторинга социальной напряженности, коррупции, социальной патологии, построение системы целей регионального развития.

**Vahram BAGHDASARYAN, Arpine ASLANYAN**

**Quality of life of the population as a strategic goal of the region's development**

*Key words: population, region, quality of life, strategy, subjective concept, objective concept*

The article examines different approaches to determining the quality of life, mainly classifying them into three groups: objective, subjective, combined. GDP Index, GPI, IEWB, GNNP, PQLI, HDI, HRQOL, International Living Index, Weenhoven HLE and Life Integral quality indicator, their construction methodologies, application perspectives and shortcomings were considered. As a result of the research, it was concluded that the best method of assessing the quality of life in the regions is the integral indicator method, as it can be used to measure the level of achievement of socio-economic development goals, monitor social tension, corruption, social pathology, property differentiation, physical health measurement, as well as the construction of a system of regional development goals.